ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՊԱՐԳԵՎ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս

Հետխորհրդային Հայաստանում ակտիվորեն սկսեցին զարգանալ թե՛ ավանդական եկեղեցիները, թե՛ նոր կրոնական կազմակերպություններ: Ավանդական եկեղեցիների դեպքում առաջնայինը խորհրդային գաղափարական կախվածությունից ազատ պայմաններում վերածնունդ ապրելն ու նախկին ազդեցությունը վերականգնելն էր: Ավանդական եկեղեցիների և արդեն գոյություն ունեցող այլ կրոնական կազմակերպությունների կողքին գործունեություն սկսեցին ծավալել նաև բոլորովին նոր, Հայաստանի հասարակությանը անծանոթ կրոնական շարժումներ, որոնք ակտիվ քարոզչության միջոցով կարողացան ձևավորել նոր կրոնական համայնքներ:

Այսօր Հայաստանում գործում են կրոնական մի շարք կազմակերպություններ, որոնց գործունեության իրավական կարգավորումն իրականացվում է ՀՀ Սահմանադրությամբ[1], միջազգային կոնվենցիաներով, հռչակագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով[2], որը ընդունվել է դեռևս 1991թ. և հետագայում ենթարկվել որոշ փոփոխությունների և լրացումների: ՀՀ-ում պաշտոնապես գրանցված են 67 կրոնական կազմակերպություններ[3], որոնք գործում են ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրությանը համապատասխան:

Կրոնական կազմակերպությունների դասակարգման հիմնախնդիրները այսօր կրոնագիտության մեջ ամենաշատ քննարկվող հարցերից են: Ժամանակակից կրոնագիտական միտքը առաջարկում է դասակարգման

---

[1] ՀՀ Սահամադրություն (էլեկտրոնային աղբյուր), https://www.president.am/hy/constitution-2015 / (մուտքը 27.03.2019թ.):

[2] «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (էլեկտրոնային աղբյուր), http://www.gov.am/u_files/file/kron/Khghcti%20azatutyun.pdf, (մուտքը27.03.2019թ.):

[3] Ցանկ ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունների (էլեկտրոնային աղբյուր), http://www.gov.am/u_files/file/kron/Kron%20cank/Tsutsak2-%20herakhos%20gov_am2017.pdf, (մուտքը 27.03.2019թ.):

տարբեր ձևեր, որոնք պայմանավորված են բազմազան և տարաբնույթ գործոններով[1]: Եղած ձևերի մեջ թերևս ընդունելին կրոնական կազմակերպությունների ժամանակակից դրսևորումները 4 տիպի բաժանելն է՝ եկեղեցի, աղանդ, դենոմինացիա (հարանվանություն) և պաշտամունք (կուլտ)[2]: Հայաստանում պաշտոնական գրանցում ստացած կրոնական կազմակերպությունների դեպքում մենք ունենք նշված տիպերից առաջին երեքը, որոնց վերաբերյալ ամբողջական և լիարժեք ուսումնասիրություններ առայժմ չկան: Իհարկե, որոշ եզրահանգումներ կամ մոտեցումներ ցուցաբերվել են ոլորտի մասնագիտական շրջանակների կողմից, սակայն դրանք բավարար չեն ՀՀ կրոնական ողջ խճապատկերը լիարժեքորեն պատկերացնելու համար, ուստի այս ուսումնասիրության շրջանակներում կփորձենք ուղղակի Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունները դասակարգել որոշակի ժամանակագրական, դավանաբանական, կազմակերպչական և այլ հատկանիշներով՝ բաժանելով հետևյալ խմբերի.

• Առաջին խմբում են ավանդական երկու հայկական եկեղեցիներ՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, որը Հայաստանում պատմականորեն ձևավորված ավանդական եկեղեցին է, և Հայաստանի Հայ Կաթողիկե եկեղեցին, որը ձևավորվել է պատմական Հայաստանում կաթոլիկ միսիոներների քարոզչության արդյունքում և պաշտոնապես իր գործունեությունը ծավալել 19-րդ դարի սկզբից:

• Երկրորդ խմբում ՀՀ ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններն ու ավանդական եկեղեցիներն են. Ռուս ուղղափառ եկեղեցի, Հայաստանի եզդիների կրոնական կազմակերպություն, Հրեական կրոնական համայնք, «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի», Ռուս մոլոկանների համայնք: Հատկանշական է, որ Ռուս ուղղափառ եկեղեցին գրանցված է 5 առանձին կրոնական կազմակերպությունների տեսքով:

• Երրորդ խումբը կազմում են բողոքական ծագում ունեցող հարանվանությունները, որոնց մեծ մասը Հայաստան են ներթափանցել 1990-ական թթ. և ակտիվ գործունեության հետևանքով ձեռք բերել որոշակի քանակի հետևորդներ: Դրանցից Հայաստանի ավետարանական եկեղեցին ծագել է դեռևս 19-րդ դարի առաջին կեսին պատմական Հայաստանի և

---

[1]Կրոնական համայնքների տիպաբանության մասին տե՛ս **Гараджа В. И.** Социология религии, М. 2007, с. 215-223.

[2]Այս մասին մանրամասն տե՛ս **Պ. Բարսեղյան,** Կրոնական կազմակերպությունների դասակարգումը // **Տարեգիրք 2016,** Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2016, էջ 245-254:

Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերում, իսկ պաշտոնապես ճանաչվել է 1846թ. որպես Օսմանյան կայսրությունում հայ բողոքական միլլեթ[1]: Այս եկեղեցին հայ իրականության մեջ ակտիվ գործունեություն է ծավալել մինչև 1915թ. հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, այնուհետև տարածվել հայկական սփյուռքում: Խորհրդային տարիներին Հայաստանի ավետարանական եկեղեցին Խորհրդային Հայաստանում գրեթե չէր գործում, սակայն Հայաստանի անկախությունից հետո հայկական սփյուռքի ավետարանական կառույցները ակտիվ գործունեություն ծավալեցին մայր հայրենիքում և սկսեցին զարգանալ: Հայաստանի ավետարանական եկեղեցին գրանցված է 5 առանձին կրոնական համայնքների տեսքով:

Այս խմբում են նաև Հայաստանի բապտիստական եկեղեցիները, որոնք հանդես են կալիս առանձին կառույցներով և երկրորդ վերածնունդ են ապրել 1990-ական թվականներին, չնայած որ բապտիստական (մկրտական) եկեղեցու հետևորդները իրենց եկեղեցու գոյությունը հասցնում են մինչև 19-րդ դարի սկիզբ[2]: Ինչպես և ավետարանական եկեղեցին, Հայաստանի բապտիստները ևս մեկ միասնական կառույց չեն և գրանցված են 10 առանձին համայնքներով:

Դեռևս 1970-ական թթ. Ռուսաստանից և Ուկրաինայից Հայաստան են ներթափանցել հիսունական քարոզիչներ, որոնց ազդեցությամբ էլ սկսեցին ձևավորվել հայ հիսունական համայնքներ, որոնք առավել մեծ տարածում գտան Հայաստանի անկախությունից հետո: Այսօր Հայաստանում մոտավոր հաշվարկներով Հայ առաքելական և կաթողիկե եկեղեցիներից հետո ամենաշատ հետևորդներ ունեցող կրոնական համայնքը հիսունականությունն է, որը մեծ տարածում ունի Հայաստանի ամբողջ տարածքում և պաշտոնապես գրանցված է 15 և ավել առանձին համայնքների տեսքով: Դրանք հիմնականում գրանցված են բնակավայրի կամ մարզի անունով և օգտագործում են «Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի» ինքնանվանումը: Սակայն պետք է նշենք, որ կան նաև մի քանի կրոնական կազմակերպություններ, որոնք ակնհայտորեն մոտ են հիսունականության ուսմունքին, բայց հանդես են գալիս լիովին ինքնուրույն: Դրանցից են «Աստծո օծյալ», «Աստծո եկեղեցի»-«Օծյալ սերունդ», «Կյանքի խոսք», «Ռեմա», «Նորառաքելոց» և այլ խարիզմատական բնույթի նեոքրիստոնեական կրոնական կազմակերպությունները, որոնք կարելի է դասել չորրորդ խմբին:

---

[1] Տե՛ս **Տ. Խաչիկյան,** Բողոքական հայերը Թուրքիայում, // Կրոն և հասարակություն, Երևան, 2010, № 10. էջ 81:

[2] Տե՛ս **Ռ. Փահլևանյան,** Հայ ավետարանական-մկրտական եկեղեցի // Կրոն և հասարակություն, Երևան, 2009, № 9. էջ 121-127:

Վերջիններից հատկապես բավականին ակտիվ գործունեություն է ծավալել և հետևորդների մեծ քանակ ունի «Կյանքի խոսքը»[1]:

Երրորդ խմբում կարելի է դիտարկել նաև Հայաստանի շաբաթապահ-գալստական (ադվենտիստական) եկեղեցին, որն իր գործունեությունը սկսել է ծավալել 20-րդ դարի սկզբին՝ նախ տարածում գտնելով Հայաստանի մոլոկանների համայնքում, այնուհետև հայ իրականության մեջ[2]: Այսօր, չնայած բավականին ակտիվությանը, այս հարանվանությունը հետևորդների մեծ քանակ չունի:

- Չորրորդ խմբին են պատկանում ոչ ավանդական բողոքական և նոր կրոնական շարժումները:

Սրանցից ամենահայտնի և մեծաքանակ հետևորդներ ունեցող համայնքը «Եհովայի վկաներ»-ինն է: Այս կրոնական կազմակերպությունը գործունեությունը սկսել է 1980-ական թվականների վերջերին և մեծ տարածում գտել ողջ Հայաստանում: Պաշտոնական գրանցում այս կազմակերպությունը ստացել է համեմատաբար ուշ (2004թ.), որի պատճառը պետության հետ հակասություններն էին, հատկապես զորակոչից խուսափելը, որի պատճառով բազմաթիվ Եհովայի վկաներ դատապարտվել են տարբեր ժամկետներով: Հարցը որոշ չափով կարգավորվել է 2003թ. ընդունված «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, որից հետո Եհովայի վկաներն իրենց ծառայությունն իրականացնում են այդ օրենքին համաձայն: Միաժամանակ նախկինում դատապարտված Եհովայի վկաների մի շարք գործեր քննվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, և արդեն կան կայացված որոշումներ իրավունքների խախտման մասին, որի արդյունքում ՀՀ-ն մեծ գումարներ է վճարել այս կազմակերպության հետևորդներին[3]:

Չորրորդ խմբի հաջորդ հայտնի կազմակերպությունը «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին» է, որն իր գործունեությունը սկսել

---

[1] Տե՛ս **Հայաստանի ավետարանական հավատքի «Կյանքի խոսք» եկեղեցի** // Կրոն և հասարակություն, Երևան, 2009, № 7. էջ 122-129:

[2] Տե՛ս **Վ. Խաչատրյան,** Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցի (էլեկտրոնային աղբյուր).http://religions.am/religions/%D5%B5%D5%B8%D5%A9%D5%A5%D6%80%D5%B8%D6%80%D5%A4-%D6%85%D6%80%D5%BE%D5%A1-%D5%A1%D5%A4%D5%BE%D5%A5%D5%B6%D5%BF%D5%AB%D5%BD%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%AB/. (մուտքը 27.03.2019թ.):

[3] Տե՛ս **Европейский суд защищает право верующего** (էլեկտրոնային աղբյուր), https://www.jw.org/ru/%D1%81%D0%B2%D0%B8%D0%B4%D0%B5%D1%82%D0%B5%D0%BB%D0%B8%D0%B8%D0%B5%D0%B3%D0%BE%D0%B2%D1%8B/%D0%B2%D0%BE%D0%BA%D1%80%D1%83%D0%B3-%D1%81%D0%B2%D0%B5%D1%82%D0%B0/AM/.(մուտքը ն27.03.2019թ.):

է 1991 թվականից և ըստ իրենց աղբյուրների՝ այսօր ունի մոտավորապես 2000 հետևորդ: Այս կրոնական կազմակերպությունը նաև ակտիվ բարեգործական ծրագրեր է իրականացնում «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կազմակերպության միջոցով[1]:

Ինչպես արդեն նշեցինք, այս խմբում են նաև հոգեգալստական դավանանքին բնորոշ նոր տիպի խարիզմատական շարժումներ, որոնց անդրադարձել ենք վերևում:

Չորրորդ խմբում է նաև սինկրետիկ և ունիվերսալիստական նոր կրոնական շարժումներից մեկը՝ «Բահայի հավատը» (Հայաստանի բահայիների համայնք), որը ևս Հայաստան է մուտք գործել 1990-ական թվականների սկզբին, չնայած որ նախկինում Ռուսական կայսրությունում տարածում ունեցել է և հետևորդներ է ունեցել նաև Անդրկովկասում:

- Հայաստանում գրանցված կրոնական կազմակերպությունների ցանկում 5-րդ առանձին խմբով կարելի է ներկայացնել «Արորդիների ուխտ» նեոհեթանոսական շարժումը, որի հետևորդների թիվը մոտավորապես 3000 է[2]:
- Եվ վերջապես 6-րդ խմբում կարելի է դասել ավետարանական և այլ եկեղեցիների բարեգործական կազմակերպությունները:

Այսպիսով, եթե Հայաստանում ավանդական եկեղեցիներն ու համայնքները հիմնականում ներկայացված են մեկ կամ միասնական հոգևոր կենտրոնով և ներկայանում են միասնական կառույցի տեսքով, ապա ավանդական բողոքական և նոր կրոնական շարժում համարվող մի քանի կազմակերպություններ հանդես են գալիս հիմնականում տեղական կամ տեղային նշանակության կրոնական կազմակերպությունների տեսքով և միասնական չեն: Դա իհարկե բխում է այս կազմակերպությունների կառուցվածքային և կազմակերպչական ինքնատիպ բնույթից: Ամբողջացնելով և խմբավորելով իրարից անջատ գործող, բայց միաժամանակ նույն դավանանքը և կրոնական համայնքը ներկայացնող այս կազմակերպությունները՝ կարող ենք փաստել, որ ՀՀ պաշտոնապես գրանցված 67 կրոնական կազմակերպությունների թիվն իրականում ավելի քիչ է, մոտավորապես 20-ը: Միևնույն ժամանակ պետք է նշենք, որ Հայաստանում տարածում են գտել նաև նոր կրոնական այլ շարժումներ ևս, որոնք պաշտոնապես գրանցված չեն, և դրանց գործունեությունը քիչ է ուսումնասիրված:

---

[1] **Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի** // Կրոն և հասարակություն, Երևան, 2010, № 10. էջ 107:

[2] Տե՛ս **Յ. Անտոնյան,** «Արորդիների ուխտ»՝ նեոհեթանոսությունը Հայաստանում // Կրոն և հասարակություն, Երևան, 2011, № 14. էջ 73-87:

Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունները գործում են ՀՀ Սահմանադրության և ոլորտը կարգավորող մի շարք օրենքների և նորմատիվային ակտերի շրջանակում: ՀՀ Սահմանադրության հոդված 17-ը հռչակում է, որ «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը և կրոնական կազմակերպությունները անջատ են պետությունից»[1]: ՀՀ Սահմանադրության հաջորդ՝ հոդված 18-ում ասվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու, բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»[2], ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»[3]: Այս օրենքին զուգահեռ կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է հիմնականում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, որի առաջին հոդվածը հստակ արձանագրում է. «Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր»[4]: Օրենքի երկրորդ հոդվածով սահմանվում է քաղաքացիների իրավահավասարությունը՝ «անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից», իսկ երրորդ հոդվածով վավերացվում է, որ «Խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար»[5]: Օրենքով նաև սահմանվում է պետության կողմից եկեղեցու ներքին կյանքին մասնակցելու

---

[1] ՀՀ Սահամադրություն (էլեկտրոնային աղբյուր), https://www.president.am/hy/constitution-2015 / (մուտքը 27.03.2019թ.):

[2] **Նույն տեղում:**

[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենք (էլեկտրոնային աղբյուր), -+http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2911&lang=arm (մուտքը 27.03.2019թ.):

[4] Տե՛ս Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (էլեկտրոնային աղբյուր), http://www.gov.am/u_files/file/kron/Khghcti%20azatutyun.pdf. (մուտքը 27.03.2019թ.):

[5] Նույն տեղում:

անթույլատրելիությունը, որի համաձայն՝ պետությունը չի կարող քաղաքացուն հարկադրել դավանելու այս կամ այն կրոնը, միջամտել կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին: Օրենքն արգելում է նաև եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական ֆունկցիա:

Անձի կրոնական ազատությունը երաշխավորելուց զատ՝ օրենքով սահմանվում է կրոնական խմբերի, կազմակերպությունների կրոնական պրակտիկայի իրավունքը և ապահովվում է կրոնական կազմակերպությունների ներքին ինքնավարությունը:

Ընդունելով կրոնական կազմակերպությունների ազատ գործելու իրավունքը՝ ՀՀ օրենսդրությունը միաժամանակ ձևակերպում է դրանց գործունեությունից բխող այլ իրավունքները՝ սեփականություն ունենալու և տնօրինելու, կրոնական կրթության կազմակերպման, հոգևորականներ պատրաստելու, կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր ձեռք բերելու և օգտագործելու, նվիրատվություններ ընդունելու, բարեգործությամբ զբաղվելու և այլ իրավունքներ: Այդ իրավունքներն իրացնելու համար կրոնական կազմակերպությունները ստանում են իրավաբանական անձի կարգավիճակ պետության կողմից օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից: Կրոնական կազմակերպությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում կատարվում է առանց ավելորդ քաշքշուկի, առավելագույնը մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպություններն սկզբունքորեն իրավահավասար են: Ճիշտ է, ինչպես արդեն նշեցինք, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով Հայ առաքելական եկեղեցուն տրվում է հատուկ կարգավիճակ, սակայն դա Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն հավելյալ իրավունքներ չի շնորհում: 2007թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը միայն կարգավորում է պետության և եկեղեցու հարաբերությունները, որոնք, հասկանալի պատճառներով, բազմաբնույթ են: 1700-ամյա գործունեության ընթացքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին ձեռք է բերել ահռելի ծավալի ազգային-մշակութային ժառանգություն և ունի մշակութային հաստատություններ՝ հավաքածուներ, թանգարաններ, գրադարաններ, արխիվներ, որոնք, լինելով հայ ժողովրդի մշակույթի բաղկացուցիչը, չեն կարող չհետաքրքրել պետությանն ու եկեղեցուն միաժամանակ: Այդ ժառանգության հարցերն օրենքով կարգավորելը բխում է հասարակության

շահերից: Որևէ օրենք պետությանը չի արգելում պայմանագրային կամ օրենքով կարգավորվող հարաբերություններ ունենալ որևէ այլ կրոնական կազմակերպության հետ:

Կրոնական խտրականությունը և կրոնական իրավունքի սահմանափակումը ՀՀ օրենսդրությունը բազմաթիվ ձևերով արգելում է: Կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով կատարված հանցագործությունները հետապնդվում են քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով:

ՀՀ օրենսդրությունը փորձում է կարգավորել նաև կրթության ոլորտում կրոնական կազմակերպությունների գործունեությունը: Հանրապետության պետական կրթական հաստատություններում կրոն չի դասավանդվում, և այդ կարգը հաստատված է օրենքներով:

Միջազգային իրավունքի զարգացումներին համահունչ է նաև «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում է, որ Այլընտրանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը: Այլընտրանքային ծառայության տեսակները Հայաստանում երկուսն են՝ «այլընտարանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն» և «այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն»[1]:

Այսպիսով կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների ազատ գործունեությունը լիովին երաշխավորված է և ՀՀ օրենսդրությունը հնարավորություն է տալիս ամբողջությամբ կարգավորելու դրանց գործունեության ոլորտը:

Բանալի բառեր՝ *Հայաստան, եկեղեցի, կրոնական կազմակերպություններ, դասակարգում, օրենքներ*:

[1] ՀՀ օրենքը այլընտրանքային ծառայության մասին (էլեկտրոնային աղբյուր), http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1884&lang=arm, (մուտքը 27.03.2019թ.):

SOME ISSUES ABOUT THE CLASSIFICATION OF RELIGIOUS ORGANIZATIONS IN ARMENIA

BARSEGHYAN PARGEV
Candidate of Philiosophical Sciences
Assistant Professor

There are several religious organizations operating in Armenia nowadays. They can be divided into the following groups: traditional churches, religious organizations of national minorities, reformist denominations, non-traditional religious organizations, neo-paganism and religious charitable organizations.

Key words: *Armenia, church, religious organizations, classification, laws.*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КЛАССИФИКАЦИИ РЕЛИГИОЗНЫХ ОРГАНИЗАЦИЙ АРМЕНИИ

БАРСЕГЯН ПАРГЕВ
Кандидат философских наук, доцент

В Армении действует множество религиозных организаций, которые можно разделить на следующие группы: традиционные церкви, религиозные организации национальных меньшинств, протестантские деноминации, нетрадиционные религиозные организации, неоязычество и религиозные благотворительные организации.

Ключевые слова*: Армения, церковь, религиозные организации, классификация, законы.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.03.2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.04.2019թ.: